Հարցաշար հայոց լեզվի օլիմպիադայի մարզային փուլի
10-րդ դասարան

Տևողությունը՝ 2 ժամ 30 րոպե

Մեծ ժառանգություն է ստացել մարդկությունը Հին աշխարհից, Եգիպտոսում վեր խոյացող երկնամու- բուրգերը՝ հնադարում ապրած փարավոնների **դամբարանները**:

Իր վիթխարի չափերով ամենամեծը Քեոփս փարավոնի սիգապան- դամբարանն է. նրա կառուցման համար ըստ հնէաբանների մանրազ-ին հաշվարկների՝ պահանջվել է երկու միլիոն երեք հարյուր հազար կրաքարային զանգված, յուրաքանչյուրը երկու տոննայից ավելի: Ու-ակի **ա-շեցնող** է քարտաշների՝ անիրական թվացող աշխատանքի ճ-գրտությունը: Հսկա վեմերն այնպես են ա-ուցված, որ դանակի շեղ-ն անգամ չի մտնի դրանց արանքը:

Հազարավոր ստրուկներ տասնամյակներ գիշերուզ-ր տ-նելով՝ շինեցին ան-ստգյուտ մի կոթող, **որն** իր ընդերքում պիտի ա-փոփեր փարավոնի **աճյունը:**

Նրանք ովքեր ցանկանում էին խոնար-վել՝ իրենց խոր-ին հարգանքի տուրքը մատուցելով մեռած թագավորին, այցելում էին հո-եհանգստի հ-կված սյուներով տաճարը, **որի** լույսը թափանցում էր ձե-ունի **անցքերից**: Փարավոնի մարմինը փ-ելուց զեր- պահելու նպատակով, զ-ծում էին զմու-սով, որից հետո հոտավետ ձյութով, ախո-ժաբույր կնդրուկով ու քսու-ներով: Այնուհետև զգեստավորում, զու-ում էին թագավորին վայել հագուստով ու պ-նանքով, իսկ ակնակապի-ներում զետեղում փղոսկրյա կամ բյուրեղապակյա աչքեր: Այս կերպ էր պատրաստվում մում-ան:

Հո-ում էին նաև, որ հանդեր-յալ կյանքում հանգուցյալը ապահո-ած լինի ամեն ինչով. նրանք դամբարանը բոլորեքյան գոտ-որում էին կենցաղային զանազան իրերով, նույնիսկ՝ կառքով:

1.Լրացրո՛ւ բաց թողնված տառերը: (6 միավոր)
2.Արտագրի՛ր տեքստը՝ շտկելով կետադրական սխալները և անհրաժեշտ տեղերում լրացնելով բաց թողնված տրոհության նշանները: (5 միավոր)
3. Տեքստից դուրս գրի՛ր 5 բառ, որոնք համանուն զույգեր ունեն (ընդհանուր 10 բառ) և յուրաքանչյուրի կողքին նշի՛ր խոսքի մասը և բառիմաստը: (5 միավոր)
4.Փակագծերը բացելով՝ բառերը գրի՛ր միասին, անջատ կամ գծիկով. հնուց(ի)վեր, առ(ձեռն), գնալ(բերել), վաղը(ևեթ), օր(օրի), կաս(կարմիր), գյուղե(գյուղ), երեք(չորրորդ), վառ(կանաչ), հայ(ֆրանսիական), թերի(բարձրագույն), ոտքով(գլխով),ոչ(ոք), հյուսիս(արևելք), հրամ(կազմ), նոր(ջուղայեցի), մեջ(բերել), հինգ(հարկանի), լիտր(վայրկյան), անուն(ազգանուն): (5 միավոր)
5. Նշի՛ր բնագրում ընդգծված բառերի շարահյուսական պաշտոնները: (6 միավոր)
6. Կազմի՛ր 4 դարձվածք ***գլուխ*** բառով և մեկնաբանի՛ր: (4 միավոր)
7. Տրված բառակապակցություններն արտահայտի՛ր մեկ բառով՝ **գմբեթի կոնաձև ծածկ, ոտքի նեղ ճանապարհ**, **հատիկեղենի կույտ**, **փայտագործ վարպետ, արու թռչուն**: (5 միավոր)
8.Մեկնաբանի՛ր **արջի ծառայություն, դանայան տակառ**, **աքիլլեսյան գարշապար, կրակից ուրիշի ձեռքով շագանակներ հանել** դարձվածքները: (4 միավոր)
9. Գրի՛ր շարադրություն՝ «Ես եմ կերտում իմ ապագան» վերնագրով (երկու էջի սահմաններում): (10 միավոր)